ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2016 թվականի **թիվ 34** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության՝ վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման 2016-2020 թվականների ծրագրի մասին

«Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման եւ տարածման կարգի մասին» արձանագրության 14-րդ կետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 4 հավելված)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության՝ վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման 2016-2020 թվականների ծրագիրը։

2. Սահմանել, որ Եվրասիական տնտեսական միության՝ վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման 2016-2020 թվականների ծրագրի իրագործմանն ուղղված միջոցառումների պլանն իրականացվում է Եվրասիական տնտեսական

միության բյուջեով եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների բյուջեներով նախատեսված միջոցների շրջանակներում:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
փետրվարի 12-ի թիվ 34 որոշմամբ

ԾՐԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության՝ վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման 2016-2020 թվականների

Ծրագրի անձնագիրը

Ծրագրի անվանումը՝	Եվրասիական տնտեսական միության՝ վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման 2016-2020 թվականների ծրագիր (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, Ծրագիր)
Ծրագրի մշակման հիմքը՝	«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր («Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման եւ տարածման կարգի մասին» արձանագրության 14-րդ կետ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 4 հավելված))
Պատասխանատու մշակող՝	Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)
Համամշակողներ՝	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն,

Բելառուսի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտե,

Բելառուսի Հանրապետության Ազգային բանկ,

Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարություն,

Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտե,

Ղազախստանի Հանրապետության ազգային էկոնոմիկայի նախարարության վիճակագրության կոմիտե,

Ղազախստանի Հանրապետության Ազգային բանկ,

Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն,

Ղրղզստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտե,

Ղրղզստանի Հանրապետության Ազգային բանկ,

Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն,

Ղրղզստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայություն,

Պետական վիճակագրության դաշնային ծառայություն,

Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական Բանկ,

Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարություն,

Դաշնային գանձապետարան,

Դաշնային մաքսային ծառայություն:

Նպատակը՝ վիճակագրության ոլորտում գործառնության ժամանակակից սկզբունքների եւ միջազգային ստանդարտների հիման վրա՝ Միության վիճակագրական համակարգի զարգացում, որը Միության սոցիալ-տնտեսական վիճակի եւ զարգացման վերաբերյալ որակյալ վիճակագրական տեղեկատվության տրամադրում կապահովի:

Խնդիրները՝	միջազգային վիճակագրական ստանդարտների նոր տարբերակների, ներառյալ՝ մեթոդաբանության եւ դասակարգման ներդրում. Միության վիճակագրական մեթոդաբանության մշակում եւ ներդրում ու ցուցանիշների համակարգերի զարգացում՝ ինտեգրման գործընթացների գնահատման համար. վիճակագրության ոլորտում նոր մեթոդների եւ տեխնոլոգիաների ներդրում. նախապատրաստում 2020 թվականի փուլի՝ բնակչության ազգային մարդահամարներին. Միության վիճակագրական համակարգի ներուժի ամրապնդում եւ Միության իրավունքի մաս կազմող՝ վիճակագրության ոլորտի ակտերի կատարելագործում:
Ծրագրի իրացման ժամկետները՝	2016-2020 թվականներ
Ֆինանսավորման աղբյուրները՝	Միության բյուջե (Հանձնաժողովի գործունեության ֆինանսավորման համար նախատեսված միջոցների մասով), Միության անդամ պետությունների բյուջեներ (այսուհետ՝ անդամ պետություններ) (անդամ պետությունների այն պետական մարմինների, ներառյալ՝ կենտրոնական (ազգային) բանկերը, գործունեության ֆինանսավորմանն ուղղված միջոցների մասով, որոնց վրա դրված են անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման գործառույթները (այսուհետ՝ լիազորված մարմիններ)):
Ակնկալվող արդյունքները՝	միջազգային վիճակագրական ստանդարտների նոր տարբերակների կիրառում՝ Ազգային հաշիվների 2008 թվականի համակարգ, Պետական ֆինանսների վիճակագրության 2014 թվականի ձեռնարկ, Վճարային հաշվեկշռի եւ միջազգային ներդրումային դիրքորոշման

ձեռնարկի վեցերորդ հրատարակություն, Օտարերկրյա ուղղակի ներդրումների համար ՏՀԶԿ չափանմուշային բնորոշման չորրորդ հրատարակություն, Ապրանքների միջազգային առեւտրի վիճակագրություն. հասկացություններ եւ սահմանումներ, 2010 թվական եւ այլն.

Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության որակի եւ միջազգային համադրելիության բարձրացում.

Միության դասակարգումների համակարգի ստեղծում (տնտեսական գործունեության տեսակների, ըստ տնտեսական գործունեության տեսակների արտադրանքի, տնտեսության հատվածների եւ այլն).

Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման մեթոդաբանության մշակում եւ ներդրում.

նոր վիճակագրական ցուցանիշների ներդրում՝ Միության շրջանակներում ինտեգրման գործընթացների գնահատման համար.

«Ծախսեր-Թողարկում» ազգային աղյուսակների օգտագործում՝ Միության անդամ պետությունների միջճյուղային փոխադարձ կապերի ուսումնասիրության եւ ինտեգրման ներուժի բարձրացման հնարավորությունները բացահայտելու համար.

Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, մշակման եւ տարածման արդյունավետ համակարգի ստեղծում.

անդամ պետություններում 2020 թվականի փուլի՝ բնակչության մարդահամարի անցկացման ժամկետների համակարգում եւ համադրելի ցուցանիշների նվազագույն լրակազմի համաձայնեցում.

Միության վիճակագրական համակարգի ներուժի ամրապնդում եւ Միության իրավունքի մաս կազմող՝ վիճակագրության ոլորտի ակտերի կատարելագործում:

Ծրագրի իրագործման մեխանիզմը՝	Ծրագրի իրագործման համար Հանձնաժողովի պատասխանատու դեպարտամենտը՝ լիազորված մարմինների հետ համատեղ մշակում է հերթական տարվա գործողությունների պլանը, որը Հանձնաժողովի կոլեգիային առընթեր վիճակագրության հարցերով խորհրդատվական կոմիտեի (այսուհետ՝ Խորհրդատվական կոմիտե) նիստում քննարկումից հետո հաստատվում է Հանձնաժողովի կոլեգիայի համակարգող անդամի կողմից. իրականացնում է աշխատանքի ընթացիկ կառավարում ու համակարգում եւ պատրաստում է տարեկան հաշվետվություն՝ Ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ, որը ներկայացնում է Խորհրդատվական կոմիտեի նիստի քննարկմանը։ Ծրագրի իրագործման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հանձնաժողովը՝ լիազորված մարմինների հետ համատեղ։

Ներածություն

Սույն Ծրագրի մշակման համար հիմք է հանդիսանում «Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման եւ տարածման կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 4 հավելված) 14-րդ կետը։

Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) սոցիալ-տնտեսական արդյունավետ զարգացումը պայմանավորված է Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) վերաբերյալ որակյալ պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ժամանակին ստացմամբ եւ վերլուծությամբ։

Միությունում վիճակագրության զարգացումը պետք է ուղղված լինի ընդհանուր ռազմավարական նպատակների իրագործմանը, նպաստի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) եւ անդամ պետությունների այն պետական մարմինների, ներառյալ՝ կենտրոնական (ազգային) բանկերը, գործունեության արդյունավետության բարձրացմանը, որոնց վերապահված են անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման, Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերի եւ ակտերի ու Միության շրջանակներում ընդունված՝ սոցիալ-տնտեսական քաղաքականությանն ուղղված ծրագրերի իրագործման տեղեկատվական-վիճակագրական ապահովման գործառույթները (այսուհետ՝ լիազորված մարմիններ)՝ եվրասիական ինտեգրման գործընթացների արդյունավետության եւ թափանցիկության բարձրացման նպատակով։

Համաշխարհային հանրության տնտեսության գլոբալացումն ու երկրների ինտեգրումն աճող ազդեցություն ունի պաշտոնական վիճակագրության վրա։ Վիճակագրության խնդիրներն արդեն դուրս են գալիս ազգային պահանջմունքների սահմաններից։ Բոլոր վիճակագրական տվյալները պետք է համադրելի լինեն միջազգային մակարդակում։ Տվյալ պահանջը բավարարող

վիճակագրական համակարգերը դառնում են ինտեգրման միավորումների տնտեսության կառավարման անհրաժեշտ պայմանը:

Ազգային վիճակագրական պրակտիկայի ներդաշնակեցման նպատակով վերջին երկու տասնամյակներում անդամ պետությունների կողմից ձեռնարկվել են միջոցներ՝ ուղղված բոլոր հիմնական ուղղությունների եւ ճյուղերի վիճակագրության ոլորտում միջազգային ստանդարտներին անցնելուն: Կարեւորագույն միջազգային վիճակագրական ստանդարտներն են Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից հավանության արժանացած՝ պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները, Տվյալների տարածման հատուկ ստանդարտը, Ազգային հաշիվների 2008 թվականի համակարգը, Պետական ֆինանսների վիճակագրության 2014 թվականի ձեռնարկը, Վճարային հաշվեկշռի եւ միջազգային ներդրումային դիրքորոշման ձեռնարկի վեցերորդ հրատարակությունը, Օտարերկրյա ուղղակի ներդրումների համար ՏՀԶԿ չափանմուշային բնորոշման չորրորդ հրատարակությունը, Ապրանքների միջազգային առեւտրի վիճակագրությունը. հասկացություններ եւ սահմանումներ, 2010 թվական, Միջազգային արժութային հիմնադրամի, Աշխատանքի միջազգային կազմակերպության եւ միջազգային կազմակերպությունների այլ ձեռնարկներ, միջազգային վիճակագրական դասակարգումների համակարգը, որը նկարագրված է միջազգային կազմակերպությունների՝ վիճակագրության առանձին բաժինների վերաբերյալ ձեռնարկներում, եւ այլն:

Ժամանակակից ինտեգրացիոն միավորումները զարգացնում են նաեւ սեփական նորմատիվային եւ մեթոդաբանական բազան: Եվրոպական միությունում վիճակագրության ոլորտում գործում է այնպիսի օրենսդրություն, որով սահմանվում են պարտադիր ստանդարտներ՝ Եվրոպական միության անդամ պետությունների կողմից օգտագործման համար: Այդ նորմատիվ փաստաթղթերն ունեն միջազգային կարգավիճակ, ներդաշնակեցված են Միավորված ազգերի կազմակերպության ստանդարտների հետ եւ օգտագործվում են ոչ միայն Եվրոպական միության անդամ պետությունների կողմից, այլեւ դրա սահմաններից դուրս:

I. Միության վիճակագրական համակարգի ձեւավորման միտումների վերլուծություն

Վերջին երկու տասնամյակներում անդամ պետություններում պետական վիճակագրության բարեփոխումն ուղղված է վիճակագրության ոլորտում տեղեկատվության պետական եւ հասարակական պահանջները բավարարող եւ միջազգային ստանդարտներին համապատասխանող ազգային վիճակագրական համակարգերի ձեւավորմանը: Անդամ պետությունների պետական վիճակագրությունն ունի ժամանակակից վիճակագրական համակարգի բոլոր անհրաժեշտ ատրիբուտները՝ շուկայական տնտեսություն ունեցող երկրներին բնորոշ օրենսդրություն, վիճակագրության ճյուղեր, տեխնիկական հագեցվածության բավարար մակարդակ, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում:

Անդամ պետություններում պետական վիճակագրության արագ եւ հաջող բարեփոխումն զգալիորեն պայմանավորված է այն փաստով, որ վիճակագրական գործունեության բոլոր նոր ուղղություններով իրականացվել է միջազգային ստանդարտների ներդրմանն ուղղված միջազգային համագործակցություն:

Ընդհանուր առմամբ, բարեփոխումների տարիներին անդամ պետություններում ձեւավորվել է պետական վիճակագրության նոր համակարգ, որն ուղղված է բազմազան վիճակագրական տեղեկատվության մեծ ծավալի ստեղծմանը: Վիճակագրական ցուցանիշների ձեւավորման մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում է միջազգային ստանդարտներին:

Միեւնույն ժամանակ Միության վիճակագրական համակարգը, որը ենթադրվում է զարգացնել՝ հաշվի առնելով Եվրոպական վիճակագրական համակարգի փորձը, նոր է միայն սկսել ձեւավորվել: Դրա հիմքերը դրված են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգում եւ մյուս ակտերում:

«Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման եւ տարածման կարգի մասին» («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 4 հավելված) արձանագրության 6-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովը հաստատում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տրամադրվող պաշտոնական վիճակագրական տեղեկատվության վիճակագրական ցուցանիշների ցանկը (այսուհետ՝ ցուցանիշների ցանկ) եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողովին պաշտոնական վիճակագրական տեղեկատվության տրամադրման ձեւաչափերը։ Գործում է Հանձնաժողովին առընթեր ստեղծված վիճակագրության խորհրդատվական կոմիտեն (այսուհետ՝ Խորհրդատվական կոմիտե), որին առընթեր որպես աշխատանքային մարմիններ ստեղծված են 4 ենթակոմիտե, ինչպես նաեւ մի շարք աշխատանքային եւ փորձագիտական խմբեր՝ վիճակագրության ոլորտում առանձին խնդիրների լուծման համար։

II. Ծրագրի նպատակը եւ խնդիրները

Սույն Ծրագրի նպատակն է վիճակագրության ոլորտում գործառնության ժամանակակից սկզբունքների եւ միջազգային ստանդարտների հիման վրա Միության վիճակագրական համակարգի զարգացումը, ինչը կապահովի Միության սոցիալ-տնտեսական վիճակի եւ զարգացման վերաբերյալ որակյալ վիճակագրական տեղեկատվության տրամադրումը։

Սույն Ծրագրի նպատակին հասնելու համար լուծվում են հետեւյալ խնդիրները՝

միջազգային վիճակագրական ստանդարտների, այդ թվում՝ մեթոդաբանության եւ դասակարգման նոր տարբերակների ներդրում.

Միության վիճակագրական մեթոդաբանության մշակում եւ ներդրում ու ցուցանիշների համակարգերի զարգացում՝ ինտեգրման գործընթացների գնահատման համար.

վիճակագրության ոլորտում նոր մեթոդների եւ տեխնոլոգիաների ներդրում.

նախապատրաստում 2020 թվականի փուլի՝ բնակչության ազգային մարդահամարներին.

Միության վիճակագրական համակարգի ներուժի ամրապնդում եւ Միության իրավունքի մաս կազմող՝ վիճակագրության ոլորտի ակտերի կատարելագործում:

Սույն Ծրագիրն արտահայտված նպատակային բնույթ ունի: Բոլոր խնդիրներն ուղղված են առաջադրված նպատակի իրագործմանը: Համալիր մոտեցումն արտացոլվում է նաեւ այն փաստով, որ ներդրվող յուրաքանչյուր ստանդարտի (ցուցման) համար սահմանված են դրա ներդրումն ապահովող միջոցառումներ:

III. Ծրագրի հիմնական ուղղությունները

Սույն Ծրագրի նպատակին հասնելու համար նախատեսվում է իրականացնել համալիր աշխատանքներ հետեւյալ ուղղություններով՝

միջազգային վիճակագրական ստանդարտների նոր տարբերակների ներդրում: Միջազգային ստանդարտների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ մասնակցություն միջազգային սեմինարներին, անդամ պետություններում սեմինարների անցկացում, նոր ստանդարտների եւ վիճակագրական ցուցանիշների վրա դրանց ունեցած ազդեցության վերլուծություն, այդ թվում՝ գիտահետազոտական աշխատանքներ անցկացնելու միջոցով, ինչպես նաեւ առաջատար փորձի փոխանակում, Հանձնաժողովի ակտերի ընդունում.

վիճակագրության ոլորտում լիազորված մարմինների փոխգործակցության համակարգում: Վիճակագրության ոլորտում միջազգային ստանդարտների

ներդրման շրջանակներում առանձին արդյունքների հասնելուն ուղղված միջոցառումների անցկացում՝ Հանձնաժողով ներկայացվող վիճակագրական ցուցանիշների համադրելիության վերլուծություն, այդ թվում՝ գիտահետազոտական աշխատանքներ անցկացնելու միջոցով, դրանց մոտարկման ապահովում՝ փորձի փոխանակման եւ խորհրդատվական աջակցության ցուցաբերման հիման վրա՝ անդամ պետություններում սեմինարներ անցկացնելու միջոցով.

Միության՝ ազգային եւ միջազգային դասակարգումների հետ ներդաշնակեցված դասակարգումների համակարգի ստեղծում: Հիմնական միջազգային դասակարգումները պրակտիկայում ներդնելուն ուղղված միջոցառումների անցկացում՝ Եվրասիական տնտեսական համայնքի տնտեսական գործունեության տեսակների վիճակագրական դասակարգում (NACE, Rev. 2), արտադրանքի վիճակագրական դասակարգում՝ ըստ Եվրասիական տնտեսական համայնքի տնտեսական գործունեության տեսակների (CPA 2008), Ազգային հաշիվների 2008 թվականի համակարգի՝ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգում եւ այլն, ցուցումների նախապատրաստում ազգային դասակարգումները միջազգայինների հետ ներդաշնակեցնելու վերաբերյալ, մեթատվյալների ցուցանիշների արդիականացում.

Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման մեթոդաբանության մշակում եւ ներդրում: Միության՝ ըստ ցուցանիշների ցանկի պաշտոնական վիճակագրական տեղեկատվության մեթոդիկաների մշակմանն ու ներդրմանն ուղղված միջոցառումների անցկացում՝ այն ցուցանիշների սահմանումը, ըստ որոնց պահանջվում է կատարել մեթոդաբանական փաստաթղթերի մշակում, այդ թվում՝ գիտահետազոտական աշխատանքներ անցկացնելու միջոցով, աշխատանքի անցկացում աշխատանքային խմբերի շրջանակներում, մեթոդաբանական փաստաթղթերի մշակում եւ հաստատում, դրանց կիրառման ցուցումների ընդունում՝ լիազորված մարմինների կողմից.

վիճակագրական ցուցանիշների համակարգի զարգացում՝ Միության շրջանակներում ինտեգրման գործընթացների գնահատման համար։ Միության շրջանակներում ինտեգրման գործընթացների գնահատման համար վիճակագրական ցուցանիշների համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումների անցկացում՝ վիճակագրական ցուցանիշների համակարգի զարգացման անհրաժեշտության վերլուծություն, այդ թվում՝ գիտահետազոտական աշխատանքներ անցկացնելու միջոցով, ցուցանիշների ցանկի եւ դրանց տրամադրման ձեւաչափի արդիականացում, ցուցանիշների ցանկի վիճակագրական ցուցանիշների ձեւավորման մեթոդական ցուցումների նախապատրաստում, դրանց մոնիտորինգ, ինտեգրված ցուցանիշների պարզաբանումների մշակում, համապատասխան հարցերով հրապարակումների քանակի ավելացում.

վիճակագրության ոլորտում նոր մեթոդների եւ տեխնոլոգիաների ներդրում։ Վիճակագրության ոլորտում նոր մեթոդների եւ տեխնոլոգիաների կատարելագործմանն ու ներդրմանն ուղղված միջոցառումների անցկացում՝ տվյալների հավաքագրման եւ մշակման միջոցների կատարելագործում, այդ թվում՝ վիճակագրական տվյալների եւ մեթատվյալների փոխանակման ստանդարտի (SDMX) կիրառման հիման վրա, ստացվող տվյալների ձեւաչափատրամաբանական հսկողության միջոցների զարգացում եւ կատարելագործում, նորմատիվ-տեղեկատվական տեղեկության բազայի, տվյալների դինամիկ շարքերի վարում, ինչպես նաեւ շահագրգիռ անձանց վիճակագրական տվյալների տրամադրման եղանակների կատարելագործում, միջազգային սեմինարների անցկացում եւ մասնակցություն.

2020 թվականի փուլի՝ բնակչության ազգային մարդահամարների նախապատրաստում։ Բնակչության ազգային մարդահամարների նախապատրաստմանն ուղղված միջոցառումների անցկացում, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ստանալ համադրելի տվյալներ Միության աշխատանքի շուկայի եւ միգրացիոն գործընթացների վերաբերյալ՝ Հանձնաժողովի եւ լիազորված մարմինների գործունեությունը համակարգելու վերաբերյալ առաջարկների

նախապատրաստում, աշխատանքի շուկայի եւ աշխատանքային միգրացիայի մասով բնակչության մարդահամարների հարցաթերթիկում միասնական մոդուլի մշակման վերաբերյալ առաջարկների մշակում.

Միության վիճակագրական համակարգի ներուժի ամրապնդում եւ Միության իրավունքի մաս կազմող՝ վիճակագրության ոլորտի ակտերի կատարելագործում։ Միության վիճակագրական ներուժի ամրապնդմանը եւ Միության իրավունքի մաս կազմող՝ վիճակագրության ոլորտի ակտերի կատարելագործմանն ուղղված միջոցառումներ անցկացնելու եւ դրանք սույն Ծրագրի իրագործմանն ուղղված՝ հերթական տարվա գործողությունների պլաններում ներառելու անհրաժեշտության քննարկում Խորհրդատվական կոմիտեի նիստերում։

Սույն Ծրագրի՝ բոլոր հիմնական ուղղություններով իրագործմանն ուղղված միջոցառումներն իրենցից ներկայացնում են կատարման ժամկետներով, ծավալներով եւ ֆինանսավորման աղբյուրներով փոխկապակցված համալիր աշխատանքներ՝ կատարողների եւ ավարտման ձեւերի նշմամբ, եւ իրականացվում են միջոցառումների պլանին համապատասխան՝ հավելվածի համաձայն։

IV. Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

Սույն Ծրագրի միջոցառումների կատարումն իրականացվում է Միության բյուջեի շրջանակներում (Հանձնաժողովի գործունեության ֆինանսավորման համար նախատեսված միջոցների մասով), ինչպես նաեւ անդամ պետությունների բյուջեների շրջանակներում (լիազորված մարմինների գործունեության ֆինանսավորմանն ուղղված միջոցների մասով)։

V. Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ակնկալվում է, որ սույն Ծրագրի իրագործման արդյունքում կապահովվի Միության վիճակագրական համակարգի՝ վիճակագրության ոլորտում գործառնության սկզբունքների եւ միջազգային ստանդարտների վրա հիմնված

զարգացում, ինչի շնորհիվ կապահովվի Միության սոցիալ-տնտեսական վիճակի եւ զարգացման վերաբերյալ որակյալ վիճակագրական տեղեկատվության տրամադրում։

Դրան կնպաստեն հետեւյալ կոնկրետ արդյունքներին հասնելը՝

միջազգային վիճակագրական ստանդարտների նոր տարբերակների կիրառում. Ազգային հաշիվների 2008 թվականի համակարգ, Պետական ֆինանսների վիճակագրության 2014 թվականի ձեռնարկ, Վճարային հաշվեկշռի եւ միջազգային ներդրումային դիրքորոշման ձեռնարկի վեցերորդ հրատարակություն, Օտարերկրյա ուղղակի ներդրումների համար ՏՀԶԿ չափանմուշային բնորոշման չորրորդ հրատարակություն, Ապրանքների միջազգային առեւտրի վիճակագրություն. հասկացություններ եւ սահմանումներ, 2010 թվական եւ այլն.

Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության որակի եւ միջազգային համադրելիության բարձրացում.

Միության դասակարգումների համակարգի ստեղծում (տնտեսական գործունեության տեսակների, արտադրանքի՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների, տնտեսության հատվածների եւ այլն).

Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման մեթոդաբանության մշակում եւ ներդրում.

նոր վիճակագրական ցուցանիշների ներդրում՝ Միության շրջանակներում ինտեգրման գործընթացները գնահատելու համար.

«Ծախսեր-Թողարկում» ազգային աղյուսակների օգտագործում՝ Միության անդամ պետությունների միջճյուղային փոխադարձ կապերի ուսումնասիրության եւ ինտեգրման ներուժի բարձրացման հնարավորությունները բացահայտելու համար.

Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, մշակման եւ տարածման արդյունավետ համակարգի ստեղծում.

անդամ պետություններում 2020 թվականի փուլի՝ բնակչության մարդահամարի անցկացման ժամկետների համակարգում եւ համադրելի ցուցանիշների նվազագույն լրակազմի համաձայնեցում.

Միության վիճակագրական համակարգի ներուժի ամրապնդում եւ Միության իրավունքի մաս կազմող՝ վիճակագրության ոլորտի ակտերի կատարելագործում։

VI. Ծրագրի իրագործման մեխանիզմը

Սույն Ծրագրի իրագործման համար Հանձնաժողովի պատասխանատու դեպարտամենտը՝

լիազորված մարմինների հետ համատեղ մշակում է հերթական տարվա գործողությունների պլանը, որը Խորհրդատվական կոմիտեի նիստում քննարկումից հետո հաստատվում է Հանձնաժողովի կոլեգիայի համակարգող անդամի կողմից.

իրականացնում է աշխատանքի ընթացիկ կառավարում ու համակարգում եւ ամեն տարի պատրաստում հաշվետվություն՝ Ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ, եւ դա ներկայացնում է Խորհրդատվական կոմիտեի նիստի քննարկմանը։

Սույն Ծրագրի իրագործման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հանձնաժողովը՝ լիազորված մարմինների հետ համատեղ։

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական միության՝
վիճակագրության ոլորտում
ինտեգրման զարգացման 2016-2020
թվականների ծրագրի

ՊԼԱՆ

Եվրասիական տնտեսական միության՝ վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման 2016-2020 թվականների ծրագրի իրագործմանն ուղղված միջոցառումների

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
I. Միջազգային վիճակագրական ստանդարտների նոր տարբերակների ներդրում			
1. Միջազգային վիճակագրական ստանդարտների նոր տարբերակների ներդրմանն ուղղված միջազգային սեմինարներ, համաժողովներ եւ այլ միջոցառումներ			
1. Միջազգային վիճակագրական ստանդարտների նոր տարբերակների ներդրմանն ուղղված միջազգային սեմինարների եւ համաժողովների անցկացում՝	Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով),	տարեկան 2016 թվական, 2018 թվական 2017 թվական,	հաշվետվությունների հրապարակում՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
ֆինանսական վիճակագրության մասով սոցիալ-տնտեսական վիճակագրության մասով արտաքին ու փոխադարձ առեւտրի վիճակագրության մասով	Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական մարմինները (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ), ներառյալ՝ կենտրոնական (ազգային) բանկերը, որոնց վրա դրված են Միության անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման գործառույթները (այսուհետ՝ լիազորված մարմիններ)	2019 թվական 2020 թվական	ցանցի՝ Միության պաշտոնական կայքում
2. Մասնակցություն՝ միջազգային վիճակագրական ստանդարտների նոր տարբերակների ներդրմանն ուղղված միջազգային սեմինարներին, համաժողովներին եւ այլ միջոցառումներին	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	գործուղումների վերաբերյալ հաշվետվություններ՝ Միության

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
			շրջանակներում ստացված տեղեկատվության օգտագործման վերաբերյալ առաջարկներով
2. «Ազգային հաշվարկների 2008 թվականի համակարգ» միջազգային ստանդարտ (այսուհետ՝ ԱՀՀ-2008)			
3. Ստանդարտի կիրառման մասով փորձի փոխանակման սեմինար	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	մասնակցություն սեմինարին
4. Ստանդարտի կիրառման ցուցումների նախապատրաստում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցումներ
5. Ստանդարտի մասով տեխնիկական աջակցության ցուցաբերում՝ խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Հանձնաժողովի կոլեգիային առընթեր խորհրդատվական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստում քննարկման

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
			արդյունքների արձանագրություն
6. Անդամ պետություններում ԱՀՀ-2008 ստանդարտի հիման վրա մակրոտնտեսական ցուցանիշների ներդաշնակեցման ծրագրի մշակում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016 թվական	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
7. Անդամ պետություններում ԱՀՀ-2008 ստանդարտի հիման վրա մակրոտնտեսական ցուցանիշների ներդաշնակեցման ծրագրի իրականացման մոնիտորինգ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2017-2019 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
8. Անդամ պետությունների խորհրդատվական աջակցություն՝ ԱՀՀ-2008 օժանդակ հաշիվների մշակման հարցում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2017-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
3. «Պետական ֆինանսների 2014 թվականի վիճակագրության ձեռնարկ» միջազգային ստանդարտ			
9. Փորձի փոխանակման սեմինար՝ ստանդարտի կիրառման մասով	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	մասնակցություն սեմինարին
10. Ստանդարտի կիրառման ցուցումների նախապատրաստում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցումներ
11. Ստանդարտի մասով տեխնիկական աջակցության ցուցաբերում՝ խորհրդակցություններ,	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ			արդյունքների արձանագրություն
4. «Վճարային հաշվեկշռի եւ միջազգային ներդրումային դիրքորոշման ձեռնարկ» միջազգային ստանդարտ (վեցերորդ հրատարակություն)			
12. Փորձի փոխանակման սեմինար՝ ստանդարտի կիրառման մասով	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2018 թվականներ	մասնակցություն սեմինարին
13. Ստանդարտի կիրառման ցուցումների նախապատրաստում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2018 թվականներ	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցումներ
14. Ստանդարտի մասով տեխնիկական աջակցության ցուցաբերում՝ խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2018 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
5. «Օտարերկրյա ուղղակի ներդրումների համար ՏՀՁԿ չափանմուշային բնորոշում» միջազգային ստանդարտ (չորրորդ հրատարակություն)			
15. Փորձի փոխանակման սեմինար՝ ստանդարտի կիրառման մասով	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	մասնակցություն սեմինարին
16. Ստանդարտի կիրառման ցուցումների նախապատրաստում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցումներ
17. Ստանդարտի մասով տեխնիկական աջակցության ցուցաբերում՝ խորհրդակցություններ,	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ			արդյունքների արձանագրություն
6. «Որոշում՝ աշխատանքային գործունեության, զբաղվածության եւ աշխատուժի ոչ լիարժեք օգտագործման վիճակագրության վերաբերյալ» միջազգային ստանդարտ			
18. Ստանդարտի կիրառման ցուցումների նախապատրաստում՝ անդամ պետություններում աշխատուժի ընտրողական ուսումնասիրություններ անցկացնելիս աշխատանքի ազգային շուկաների վիճակի մոնիտորինգի համար առանցքային ցուցանիշների կազմի ձեւավորման մասով	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցում
7. «Ապրանքների միջազգային առեւտրի վիճակագրություն. հասկացություններ եւ սահմանումներ, 2010 թվական» միջազգային ստանդարտ			
19. Լիազորված մարմինների կողմից ինտեգրված տվյալների ձեւավորման վերաբերյալ Հանձնաժողովի կոլեգիայի ցուցման նախագծի նախապատրաստում՝ ապրանքների արտաքին եւ փոխադարձ առեւտրի վիճակագրության տվյալները մյուս ճյուղերի վիճակագրության տվյալների եւ բիզնես ռեգիստրի տվյալների հետ փոխկապակցման հիման վրա (այսուհետ՝ ինտեգրված տվյալներ)	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցում

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
20. Անդամ պետություններում ինտեգրված տվյալների ձեւավորման համար անհրաժեշտ աշխատանքի անցկացում	լիազորված մարմիններ	2017-2018 թվականներ	նորմատիվ իրավական ակտերի ընդունում (անհրաժեշտության դեպքում), ինտեգրված տվյալների տարածում
21. Հանձնաժողովի կոլեգիայի ցուցման նախագծի նախապատրաստում՝ անդամ պետությունների ապրանքների արտաքին եւ փոխադարձ առեւտրի վիճակագրության տվյալների հավաքագրման նկատմամբ լիազորված մարմինների կողմից համալիր մոտեցման կիրառման առնչությամբ, այդ թվում՝ օգտագործելով վարչական աղբյուրները (այսուհետ՝ համալիր մոտեցում)	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2017 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցում
22. Անդամ պետությունների արտաքին եւ փոխադարձ առեւտրի վիճակագրության վարման համալիր մոտեցումը պրակտիկայում ներդնելուն ուղղված աշխատանքի անցկացում	լիազորված մարմիններ	2018-2019 թվականներ	նորմատիվ իրավական ակտերի ընդունում (անհրաժեշտության դեպքում), համալիր մոտեցման գործնական ներդրում
23. Լիազորված մարմինների կողմից ապրանքների արտաքին առեւտրի մաքսային վիճակագրություն վարելու մեթոդաբանության մշակում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2018 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
24. Լիազորված մարմինների կողմից ապրանքների փոխադարձ առեւտրի վիճակագրություն վարելու մեթոդաբանության մշակում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2018 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի որոշում
25. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տրամադրվող պաշտոնական վիճակագրական տեղեկատվության վիճակագրական ցուցանիշների ցանկում փոփոխություններ կատարելը եւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողովին պաշտոնական վիճակագրական տեղեկատվության տրամադրման ձեւաչափերը՝ ինտեգրված տվյալների ընդգրկման մասով	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2019 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ակտ
26. Վիճակագրական աշխատանքների 2020 թվականի ծրագրի հաստատում (նախատեսվում է Միության ինտեգրված տվյալների ձեւավորում)	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2019 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ակտ

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
II. Վիճակագրության ոլորտում լիազորված մարմինների փոխգործակցության համակարգում			
1. Տնտեսական եւ սոցիալ-ժողովրդագրական վիճակագրություն			
27. Անդամ պետությունների հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության՝ միջազգային ցուցումների հետ ներդաշնակեցման աստիճանի գնահատումը	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	տարեկան	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
28. Անդամ պետությունների մեթոդաբանական պրակտիկայի վերլուծություն՝ ըստ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տրամադրվող պաշտոնական վիճակագրական տեղեկատվության վիճակագրական ցուցանիշների ցանկի բաժինների (տարեկան 2-4 բաժին)	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	վերլուծական տեսությունների տեղադրում՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հաղորդակցության ցանցի՝ Միության պաշտոնական կայքում
29. Անդամ պետություններում մասնագիտական կրթության մակարդակները բնութագրող վիճակագրական ցուցանիշների հարմարեցումը ՅՈՒՆԵՍԿՈ-ի գլխավոր համաժողովի 36-րդ նստաշրջանում ընդունված Միջազգային ստանդարտային դասակարգմանը համապատասխան կրթության աստիճաններին (2011թ. նոյեմբեր)	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցում

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
30. Միասնական միջազգային ստանդարտների հիման վրա՝ ազգային մեթոդաբանությունների մոտարկման ցուցումների մշակում՝ վիճակագրական տվյալների համադրելիության բարձրացման նպատակով	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2017-2020 թվականներ	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցումներ
2. Ֆինանսական վիճակագրություն			
31. Դրամավարկային վիճակագրության ցուցանիշների համակարգի հետագա ներդաշնակեցում եւ զարգացում			
խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
մեթոդաբանական փաստաթղթերի նախապատրաստում	Հանձնաժողով	2016-2020 թվականներ	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցումներ
32. Պետական ֆինանսների վիճակագրության ցուցանիշների համակարգի հետագա ներդաշնակեցում եւ զարգացում			
խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
մեթոդաբանական փաստաթղթերի նախապատրաստում	Հանձնաժողով	2016-2020 թվականներ	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցումներ
33. Արտաքին հատվածի վիճակագրության ցուցանիշների համակարգի հետագա ներդաշնակեցում եւ զարգացում			
խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
մեթոդաբանական փաստաթղթերի նախապատրաստում	Հանձնաժողով	2016-2020 թվականներ	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցումներ
34. Ֆինանսական հատվածի սուբյեկտների վիճակագրության ցուցանիշների համակարգի հետագա ներդաշնակեցում եւ զարգացում			
խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
մեթոդաբանական փաստաթղթերի նախապատրաստում	Հանձնաժողով	2016-2020 թվականներ	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցումներ

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
3. Ապրանքների արտաքին ու փոխադարձ առեւտրի վիճակագրություն			
35. Ամենամյա կտրվածքով լիազորված մարմինների փորձագետների երկկողմ հանդիպումների անցկացում՝ ապրանքների փոխադարձ առեւտրի վիճակագրության տվյալները համադրելու նպատակով	լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	երկկողմ հանդիպումների արձանագրություններ
36. Ապրանքների արտաքին եւ փոխադարձ առեւտրի վիճակագրության տվյալների մշակման եւ տարածման ոլորտում լավագույն փորձի տվյալների բանկի ստեղծում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն

III. Միության՝ ազգային եւ միջազգային դասակարգումների հետ ներդաշնակեցված դասակարգումների համակարգի ստեղծում

1. Տնտեսական գործունեության տեսակների դասակարգում (այսուհետ՝ ՏԳՏԴ)

37. NACE Rev.2 բազայի հիման վրա ՏԳՏԴ-ի ներդրում Հանձնաժողովի աշխատանքի պրակտիկայում՝ Միության վերաբերյալ հարակից տվյալներ ստանալու նպատակով	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2017 թվական	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
38. ՏԳՏԴ-ի արդիականացում՝ NACE Rev.2 բազայի հիման վրա	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2017-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
2. Արտադրանքի դասակարգումը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների (այսուհետ՝ ԱԴ ՏԳՏ)			
39. Հանձնաժողովի աշխատանքային պրակտիկայում ԱԴ ՏԳՏ կիրառման ցուցումների նախապատրաստում՝ CPA 2008 բազայում Միության վերաբերյալ հարակից տվյալներ ստանալու նպատակով	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցում
40. ԱԴ ՏԳՏ-ի արդիականացում՝ CPA 2008 բազայի հիման վրա	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2018-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
3. Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգում (այսուհետ՝ ՏԻՀԴ)			
41. Մեթոդաբանական փաստաթղթերի նախապատրաստում՝ ՏԻՀԴ-ի եւ համապատասխան ազգային դասակարգումների կիրառումն ընդլայնելու նպատակով	Հանձնաժողով	2016 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցում
42. ՏԻՀԴ-ի եւ համապատասխան ազգային դասակարգումների կիրառման ընդլայնում՝ խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
4. Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) եւ մյուս միջազգային դասակարգումների միջեւ անցումային բանալիների համաձայնեցում			
43. Անցումային բանալիների համաձայնեցում՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ եւ մյուս միջազգային դասակարգումների միջեւ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	տարեկան	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
5. Մյուս դասակարգումները			
44. Մյուս դասակարգումների մասով աշխատանքների անցկացում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	տարեկան	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցումներ
IV. Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորման մեթոդաբանության մշակում եւ ներդրում			
45. Միության վիճակագրական ցուցանիշների ձեւավորման մեթոդիկաների մշակում ու համաձայնեցում լիազորված մարմինների հետ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	տարեկան	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
46. Միության ապրանքների արտաքին եւ փոխադարձ առեւտրի միջին գների ու ֆիզիկական ծավալի ցուցիչների հաշվարկման մեթոդիկաների մշակում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016 թվական	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
47. Ապրանքների արտաքին եւ փոխադարձ առեւտրի	Հանձնաժողով,	2019 թվական	Կոմիտեի նիստում

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
վիճակագրության ձեւավորման մեթոդաբանության մշակում	լիազորված մարմիններ		քննարկման արդյունքների արձանագրություն
V. Վիճակագրական ցուցանիշների համակարգի զարգացում՝ Միության շրջանակներում ինտեգրման գործընթացների գնահատման համար			
48. Վիճակագրական ցուցանիշների սահմանում՝ անդամ պետությունների տնտեսական զարգացման վրա ինտեգրման արդյունքների եւ ինտեգրման գործոնների ունեցած ազդեցության գնահատման համար	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
49. Մերձսահմանային եւ միջտարածաշրջանային գործընթացների փոխազդեցության վիճակագրական չափման միջազգային փորձի եւ պրակտիկայի վերլուծություն ու անդամ պետություններում դրանց կիրառման ցուցումներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
50. «Ծախսեր-Թողարկում» աղյուսակների մասով ԱՀՀ-2008 ստանդարտի կիրառման ցուցումների նախապատրաստում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2017 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցում
51. Անդամ պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների կողմից «Ծախսեր-Թողարկում» ազգային աղյուսակների	լիազորված մարմիններ	2017-2019 թվականներ	անդամ պետությունների ազգային վիճակագրական

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
կատարելագործման միջոցառումների անցկացում			ծառայությունների միջոցառումներ (անհրաժեշտության դեպքում)
52. «Ծախսեր-Թողարկում» կատարելագործված ազգային աղյուսակների մշակում՝ Միության անդամ պետությունների միջճյուղային փոխադարձ կապերն ուսումնասիրելու եւ ինտեգրման ներուժի աճեցման հնարավորությունները բացահայտելու համար դրանց օգտագործման նպատակներով	լիազորված մարմիններ	2020 թվական	«Ծախսեր-Թողարկում» ազգային աղյուսակներ
VI. Վիճակագրության ոլորտում նոր մեթոդների եւ տեխնոլոգիաների ներդրում			
53. Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման, կուտակման, համակարգման, մշակման եւ վերլուծության ավտոմատացման ծրագրային միջոցների կատարելագործում եւ զարգացում՝			
խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
առաջարկների նախապատրաստում՝ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ինտեգրված համակարգ) «Վիճակագրություն» ենթահամակարգի զարգացման մասով	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
54. Տվյալների վիզուալացման վիճակագրական գործիքաշարի զարգացում (ինֆոգրաֆիկա, ինտերակտիվ գծապատկերներ, տեսահոլովակներ)՝			
խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
առաջարկների նախապատրաստում՝ վիճակագրական տվյալների տեսանելիացման եղանակների կատարելագործման մասով ինտեգրված համակարգի զարգացման եւ վիճակագրական տվյալների տրամադրման վերաբերյալ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
55. Տվյալների հավաքագրման եւ մշակման ծրագրային միջոցների կատարելագործում, այդ թվում՝ անդամ պետությունների պետական մարմինների հետ ֆինանսական վիճակագրության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման			

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
նպատակով տվյալների եւ մեթատվյալների փոխանակման ստանդարտի (այսուհետ՝ SDMX) կիրառման հիման վրա՝			
խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
առաջարկների նախապատրաստում՝ տվյալների եւ մեթատվյալների փոխանակման նպատակով SDMX ստանդարտի կիրառման մասով ինտեգրված համակարգի «Վիճակագրություն» ենթահամակարգի զարգացման վերաբերյալ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
56. 2019 թվականի վիճակագրական աշխատանքների ծրագրի հաստատում (նախատեսվում է ապրանքների արտաքին եւ փոխադարձ առեւտրի վերաբերյալ Միության պաշտոնական վիճակագրական տեղեկատվության ձեւավորում՝ բաղադրյալ (դիսկրետ) հիմքի վրա)	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2018 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ակտ
57. Միության ապրանքների արտաքին եւ փոխադարձ առեւտրի միջին գների եւ ֆիզիկական ծավալի ցուցիչների հաշվարկների ապահովման	Հանձնաժողով	2018-2019 թվականներ	Միության ապրանքների արտաքին եւ փոխադարձ առեւտրի

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
մասով ինտեգրված համակարգի «Վիճակագրություն» ենթահամակարգի զարգացում			միջին գների ու ֆիզիկական ծավալի ցուցիչներ
VII. Նախապատրաստում 2020 թվականի փուլի՝ բնակչության ազգային մարդահամարներին			
58. Աշխատանքային գործունեության եւ միգրացիայի հետ կապված հարցերի մոդելային բլոկի մշակում՝ անդամ պետությունների մարդահամարների թերթիկներում ընդգրկման համար	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016 թվական	Հանձնաժողովի կոլեգիայի ցուցում
59. Անդամ պետություններում 2020 թվականի փուլի՝ բնակչության մարդահամարների հարցերով խորհրդակցությունների անցկացում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2019 թվականներ	խորհրդակցությունների արձանագրություններ
60. Մասնակցություն՝ անդամ պետությունների ազգաբնակչության 2020 թվականի մարդահամարների հարցերով միջազգային միջոցառումներին	Հանձնաժողով	2016-2020 թվականներ	Գործուղումների վերաբերյալ հաշվետվություններ՝ Միության շրջանակներում ստացված տեղեկատվության օգտագործման

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
			վերաբերյալ առաջարկներով
VIII. Միության վիճակագրական համակարգի ներուժի ամրապնդում եւ Միության իրավունքի մաս կազմող՝ վիճակագրության ոլորտի ակտերի կատարելագործում			
61. Առաջարկների նախապատրաստում՝ Միության իրավունքի մաս կազմող՝ վիճակագրության ոլորտի ակտերի կատարելագործման վերաբերյալ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	տարեկան	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
62. Վիճակագրական տվյալների տարածման վիճակագրության մշակում՝ խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016 թվական	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
63. Միության վիճակագրական համակարգի ներուժի բարձրացմանն ուղղված առաջարկների եւ ցուցումների մշակում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2017 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
64. Միության վիճակագրական համակարգի ներուժի բարձրացում՝ խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
65. «Open Data» նախագծի մշակում եւ իրագործում՝			
խորհրդակցություններ, փորձի փոխանակում, վերապատրաստման դասընթացներ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
նախագծի իրագործման պլանի մշակում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2017-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
ինտեգրված համակարգին նախագծի իրագործման մասով ներկայացվող պահանջների մշակում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2017-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
66. Առաջարկների նախապատրաստում՝ վիճակագրական տվյալների տարածման մասով Միության տեղեկատվական պորտալի զարգացման ու բովանդակային համալրման վերաբերյալ՝			
առաջարկների նախապատրաստում՝ Միության տեղեկատվական պորտալի բովանդակային համալրման վերաբերյալ	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
առաջարկների նախապատրաստում՝ Միության տեղեկատվական պորտալի՝ պաշտոնական	Հանձնաժողով,	2016-2020	Կոմիտեի նիստում քննարկման

Միջոցառում	Կատարողներ	Կատարման ժամկետ	Եզրափակման ձեւ
վիճակագրական տվյալների տրամադրման մասով զարգացման վերաբերյալ	լիազորված մարմիններ	թվականներ	արդյունքների արձանագրություն
67. Առաջարկների նախապատրաստում՝ սոցիալական ցանցերի միջոցով վիճակագրության մասսայականացման նպատակով Միության տեղեկատվական պորտալի զարգացման վերաբերյալ՝			
սոցիալական ցանցերի միջոցով վիճակագրության մասսայականացման մոտեցումների սահմանում	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն
ինտեգրված համակարգի նկատմամբ պահանջների սահմանում՝ սոցիալական ցանցերի միջոցով վիճակագրության մասսայականացման նպատակով	Հանձնաժողով, լիազորված մարմիններ	2016-2020 թվականներ	Կոմիտեի նիստում քննարկման արդյունքների արձանագրություն